ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Doi: 10.56737/2953-7843-2025.05-8

Տ. ՄԻՆԱՍ ԱԲԵՂԱ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԾՆՆԴՈՅ ԳՐՔԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԵՐՈՒՄ[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս հոդվածով ներկայացվում է Ծննդոց գրքի առաջին գլուխների վերլուծությունը՝ մատնանշելով մարդկային արժանապատվության եւ հանրային բնույթի հիմնարար սկզբունքները։ Անդրադարձ է կատարվում նաեւ մեղքի հետեւանքներին եւ դրանց ազդեցությանը մարդկային հասարակության վրա։

Մարդկային արժանապատվության հարցն առկա է համաշխարհային փիլիսոփայության, իրավունքի եւ աստվածաբանության հիմնական ուղղություններում։ Մարդն ունի աստվածատուր արժանապատվություն, որը պետք է հարգվի եւ պահպանվի ընկերային հարաբերությունների բոլոր մակարդակներում։

Եկեղեցին, որ յուրաքանչյուր մարդու մեջ տեսնում է Աստծու կենդանի պատկերը եւ իրականացնում նրա համար ամենաբարձր ու բացառիկ ծառայությունը՝ մշտապես ընդգծում է նրա բարձրագույն կոչումը։ Այն Քրիստոսով ճանապարհ է մատնացույց անում մարդուն եւ մտադիր է առաջինն անցնել այդ ճանապարհով՝ կոչ անելով յուրաքանչյուրի մեջ տեսնել մերձավորի ու հեռավորի, ծանոթի ու անծանոթի, իսկ նախ եւ առաջ, աղքատի ու տառապյալի մեջ իր եղբորը, որի համար Քրիստոս մահացավ (հմմտ. Ա. Կորնթ. Ը. 11, Հռոմ. ԺԴ. 15)։

Ողջ ընկերային կյանքը մարդկային անհատի դրսեւորումն է։ Եկեղեցին բազմիցս ու տարբեր ձեւերով տվել է այդ ճշմարտության հեղինակավոր մեկնաբանությունը՝ ընդունելով ու պնդելով մարդկային անհատի կենտ-

---

[1]* *Ստացվել է՝ 19.03.2025, գրախոսվել է՝ 21.03.2025։ էլ. հասցե՝* hayrminas@gmail.com:

րոնական դիրքը ցանկացած միջավայրում ու հաղորդակցականության ցանկացած արտահայտման դեպքում։ Մարդկային հասարակությունն իրենից ներկայացնում է Եկեղեցու ընկերային հայեցակարգի առարկան, քանի որ Եկեղեցին չի գտնվում հանրայնորեն միավորված մարդկանցից դուրս կամ նրանցից վեր, այլ գոյություն ունի բացառապես նրանց մեջ, եւ հետեւաբար, նրանց համար։ Մարդն ամենեւին համակեցական կյանքի ենթակա եւ կրավորական տարրը չէ, այլ՝ ընդհակառակը, պետք է լինի ու մնա դրա գործուն մասնակիցը, հիմքը եւ նպատակակետը։ Այսպիսով՝ նրանից է սկիզբ առնում հանրային կյանքը, որը չի կարող չճանաչել նրան իբրեւ գործուն ու պատասխանատու, հատկապես նա պետք է լինի հասարակության բոլոր դրսեւորումների նպատակը։

Մարդ անհատն իր ներքին բնությամբ հանրային էակ է, քանի որ այդպիսին է նրան մտահղացել Աստված։ Իր պատմական անմիջականությամբ մարդն ընկերային կյանքի սիրտն ու ոգին է։ Իրոք, ողջ ընկերային հայեցակարգը պետք է կառուցված լինի մարդկային անհատի անձեռնմխելի արժանապատվությունն հաստատող սկզբունքի վրա։ Բազմիցս արտահայտելով այդ գիտելիքը՝ Եկեղեցին ձգտել է նախ եւ առաջ պաշտպանել մարդկային արժանապատվությունն այն կրճատելու ու աղավաղելու փորձերից։ Ավելին, Եկեղեցին բազմիցս դատապարտել է մարդկային արժանապատվության ոտնահարումները։ Պատմությունը վկայում է, որ հանրային հարաբերությունների հենքից է ծագում մարդուն բարձրացնելու ամենալայն հնարավորությունների մի մասը, բայց այստեղ են թաքնված նաեւ նրա արժանապատվության դեմ ուղղված ամենաստոր հանցագործությունները։

Նրանում, որ մարդն ստեղծված է Աստծու կերպարով, իբրեւ Տիրոջ սքանչելի ստեղծագործություն (հմմտ. Սաղմ. ՃԼԹ. 14–18), Սուրբ Գիրքը տեսնում է նրա բնորոշ ու տարբերակիչ տարրը. «Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր Իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա, արու եւ էգ արար զնոսա» (Ծննդ. Ա. 27)։ Մարդն ազատ եւ ինքնիշխան էր, մաքուր էր, չուներ որեւէ արատ կամ թերություն կամ այն ինչ կոչվում է մեղք։ Ինչպես Հայ Եկեղեցու մեծանուն սրբերից եռամեծար վարդապետ Ս. Գրիգոր Տաթեւացին (14–15-րդ դդ.) է նշում, ինքնիշխան կամքը մարդու գլխին Աստծու դրած թագն էր[2]։ Աստված այդպես արարեց մարդուն,

---

[2] *Տե՛ս* Գրիգոր Տաթեւացի, *Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 271։*

որովհետեւ մարդու մեջ ոչ թե կյանքը պետք է պարզապես հոսեր իրենից անկախ, այլ մարդու համար ապրել նշանակում էր ընտրություններ կատարել, որոշումներ կայացնել, սիրել, հրճվել, հիասթափվել, վերահաստատվել եւ այլն: «Որովհետեւ առանց ազատ կամքի, անգամ եթե դրանից չարն է գոյանում, անհնարին կլիներ սերը, բերկրանքն ու գեղեցկությունը, այսինքն այն ամենն, ինչ աշխարհում հիրավի արժեք ունի»[3]: Աստված, ստեղծելով մարդուն, դնում է նրան արարման կենտրոնում, նրա վրա կենդանության շունչ փչում (հմմտ. Ծնն. Բ. 7), այսինքն՝ օժտում Իր Հոգով: «Մինչ այն պահը, երբ Աստված հոգի փչեց Ադամի մեջ, նա կենդանու նման էր»[4], այսինքն՝ չուներ բանականություն: «Մարդուն իսկապես մարդ դարձնողը՝ Աստծու Հոգու ներկայությունն է նրա մեջ»[5]: Աստծու Հոգով օժտելն էլ հենց նշանակում է, որ Աստված ներդրեց մարդու մեջ Իր աստվածային հատկությունները: Տերը խտրականություն չի դրսեւորում. տալով այդ հատկանիշներն առաջին մարդուն, Նա փոխանցեց այդ ամենը նաեւ նրա ժառանգներին, բոլորին հավասար՝ ընդհանրապես մարդուն:

Եւ մարդն այլեւս արարված լինելով Աստծու կերպարով՝ ունի անձի արժանապատվություն: Նա ընդունակ է ճանաչել, տիրապետել եւ ազատություն պարգեւել ինքն իրեն ու շփման մեջ մտնել մյուս անհատների հետ եւ շնորհով նա կոչված է իր Արարչի հետ միության, կոչված է պատասխանելու նրան հավատով ու սիրով, որոնք ոչ ոք չի կարող տալ Նրա փոխարեն: Այն, որ մարդը նման է Աստծուն, ցույց է տալիս, որ մարդու էությունն ու գոյությունն ըստ էության կապված են Աստծու հետ ամենախորքային ձեւով, եւ այդ կապը գոյություն ունի ինքն իրենով: Մարդու ամբողջ կյանքը հարց է Աստծու մասին եւ փնտրտուք Ամենազորի: Աստծու հետ այդ կապի մասին կարելի է չիմանալ, կարելի է մոռանալ կամ դուրս մղել, բայց երբեք չի կարելի խզել: Տեսանելի աշխարհի բոլոր արարչագործություններից միայն մարդն է «ունակ» ընդունել Աստծուն: Որպես Իր հետ շփման համար Աստծու ստեղծած անձնավոր էակ մարդը, միայն շփման մեջ կարող է ապրել ու արտահայտել իրեն եւ բնական ճանապարհով ձգտել Աստծուն:

---

[3] *Տե՛ս* Л. Клайв, Просто христианство, Чикаго, 1990, *էջ 55:*

[4] *Տե՛ս* С. Саровский, О цели христианской жизни, М., 1914, *էջ 11:*

[5] *Տե՛ս* И. Мейндорф протоиереи, Православие и современный мир, Минск, 1995, *էջ 65:*

Աստծու եւ մարդու միջեւ կապն արտացոլվում է մարդկային բնության ընկերային չափման՝ շփման, հաղորդակցման նկատմամբ առկա վերաբերմունքի մեջ։ Մարդը միայնակ էակ չէ եւ իր ներքին բնույթով հանրային էակ է, եւ մյուս մարդկանց հետ հարաբերություններից դուրս նա չի կարող ապրել, ոչ իսկ զարգացնել իր շնորհները։ Այս կապակցությամբ նշանակալի է այն փաստը, որ Աստված մարդուն ստեղծեց որպես արու եւ էգ (հմմտ. Ծննդ. Ա. 27)։ Միայն կնոջ հայտնվելը, որ մարմին էր իր մարմնից ու ոսկոր էր իր ոսկրից (հմմտ. Ծննդ. Բ. 23), եւ որում նույնպես ապրում է Արարիչ Աստծու հոգին, կարող է բավարարել մարդկային գոյության համար կենսապես կարեւոր միջանձնային երկխոսության պահանջմունքը։ Ուրիշ մարդու մեջ՝ տղամարդու կամ կնոջ, արտահայտվում է Ինքն Աստված՝ յուրաքանչյուր անձի վերջնական նպատակն ու իրականացումը։ Տղամարդն ու կինը միանման արժանապատվություն ունեն եւ երկուսն էլ, լինելով տարբեր, արարված են Աստծու պատկերով եւ նմանությամբ։ Նրանց միասնության մասին ուխտը ներկայացված է Սուրբ Գրքում՝ որպես մարդկանց հետ Աստծու Ուխտի պատկեր (հմմտ. Ես. 54, Եփես. Ե. 21–33) եւ միաժամանակ, որպես կյանքի ծառայություն։ Չէ՞ որ մարդկային զույգը այլեւս կարող է մասնակցել Աստծու արարչագործության ծրագրին. «Եւ օրհնեաց զնոսա Աստուած եւ ասէ. Աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք զերկիր...» (Ծննդ. Ա. 28)։ Տղամարդը եւ կինը կապված են մյուսների հետ, նախ եւ առաջ, ինչպես նրանք, ում վստահված է այլոց կյանքը։ «Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա...» (Ծննդ. Թ. 6),– ասում է Աստված Նոյին ջրհեղեղից հետո։ Այս հեռանկարում Աստծու հետ կապը պահանջում է մարդկային կյանքը համարել սրբազան ու անձեռնմխելի։

Վեցերորդ պատվիրանը՝ «Մի՛ սպանաներ» (Ելք Ի. 13), գործում է այնքանով, որ միայն Աստված է կյանքի ու մահվան Տերը։ Այս պատվիրանը պետք է դիտել որպես արարչության սկզբից գոյություն ունեցող արգելքի հետագա օրենսդրական սահմանում։ Պատվիրանն ամենեւին նպատակ չունի կատարելու ինչ-ինչ փոփոխություն որեւէ մի դրվածքում, որ արարման ժամանակ է սահմանվել։ Քրիստոնեության առանձնահատկություններից կարեւորագույնն այն է, որ Աստված վարվելակերպի անձնական օրինակ է ցույց տալիս մարդկանց։ Հետեւաբար, Տերն Ինքն էլ է հետեւում Իր սահմանած կանոններին, այդ թվում՝ «Մի՛ սպանիր» պատվիրանին։ Այդ իսկ պատճառով Աստված կարող է չսպանելու սկզբունքը ներկայացնել

մարդկանց, ընդգծելով. «ջնջեմ զանօրէնութիւնս քո... վասն իմ, եւ զմեղս քո այլ ոչ եւս յիշեցից» (Ես. ԽԳ. 25)։ Այդ աստվածատուր ներման երանությամբ են ոգեշնչված մեծն Նարեկացու տողերը (Բան Ծէ.). «Եւ բժշկություն պարգեւիր իմ վերքերին, տուր հնարավորություն՝ կորուստից դուրս գալու, զերծումն՝ բազմամասնյա մահից եւ կենաց շավիղ՝ ապականվածիս, նորոգություն՝ եղծյալիս եւ հույսի մուտք ամբարշտիս...»[6]։

Վստահաբար կարելի է պնդել, որ ապրելու իրավունքը մարդու արարումով արդեն հռչակվեց որպես հիմնարար իրավունք։ Սուրբ Գրքի հենց սկզբում շեշտվում է մարդու ու կյանքի անքակտելի միությունը, չէ՞ որ Ադամ անունը նշանակում է մարդ, իսկ Եւա՝ կյանք։ Անգամ մեղսագործությունից հետո՝ մարդը, ճաշակելով արգելված պտուղը, չմեռավ մարմնով, բայց մեռավ հոգով։ Ուրեմն նախաստեղծներին ասվածը, թե «զի յորում աւուր ուտիցէք ի նմանէ՝ մահու մեռանիցիք» (Ծննդ. Բ. 17), վերաբերում էր հոգուն եւ ոչ թե մարմնին։ Ադամն ապրեց 930 տարի (հմմտ. Ծննդ. Ե. 5), սակայն Աստծուց հեռացած ու բաժանված։ Բացի այս դրվագից կարելի է հանդիպել նաեւ բազում այլ արտահայտություններ, որոնք հաստատում են, որ մահ բառով Աստված նկատի չունի մարմնավոր կորուստը, այլ հոգեւորը։ Այսպես օրինակ առաքյալը հորդորում է. «Եղբա՛ր իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորեսցի ի ճանապարհէ ճշմարտութեան, եւ դարձուսցէ ոք զնա, գիտասցէ՝ զի դարձուսցէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ի մահուանէ, եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց» (Յակ. Ե. 19–20)։ Այս համապատկերում է իմաստավորվում Քրիստոսի խոսքն առ այն, որ Նա աշխարհ է եկել մեղավորներին փրկելու համար։ Բարսեղ Մաշկեւորցին հետեւյալն է գրում. «Աստուած ինչո՞ւ անմիջապէս չի պատժեր, որովհետեւ քեզի զղջալու առիթ կուտայ։ Ան մեղաւորին մահը չուզէր, այլ՝ զղջալը եւ ապրիլը»[7]։

Մարմնավոր կյանքի անձեռնմխելիության ու ամբողջականության հանդեպ պատշաճ հարգանքն իր գագաթնակետին է հասնում ընկերոջը սիրելու սքանչելի պատվիրանում՝ «եւ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո» (Ղեւտ. ԺԹ. 19), որով Հիսուս մեզ պարտավորեցնում է մեր վրա վերցնել մերձավորի մասին հոգածությունը (հմմտ. Մատթ. ԻԲ. 37–40, Մարկ. ԺԲ. 29–31, Ղուկ. Ժ. 27–28)։

---

[6] *Տե՛ս* Գրիգոր Նարեկացի, *Մատյան ողբերգության, Ս. Էջմիածին, 2021, էջ 259։*

[7] *Տե՛ս* Բ. Մաշկեւորցի, *Յորդորակներ, Անթիլիաս, 1980, էջ 71։*

Աշխարհի նկատմամբ մարդու գերիշխումը պատասխանատվություն է պահանջում, եւ դա կամայական ու եսասիրական շահագործում չէ։ Ողջ արարչագործությունն արժեքավոր է որպես «բարի» (հմմտ. Ծնն. Ա., Դ. 10) Աստծու՝ դրա Հեղինակի համար։ Մարդը պետք է բացահայտի ու հարգի արարչության արժեքը։ Ինչպես ասվում է Ս. Գրիգոր Լուսավորչին վերագրվող ճառում. «Աստծո սերը մեր նկատմամբ հայտնվում է նրանով, որ Նա մեզ համար ստեղծեց երկինքն ու երկիրը եւ նրանց միջի արարածները»[8]։ Դա կոչ է մարդուն, որը պիտի բարձրացնի նրան ասես թեւերի վրա։

Ծննդոց գիրքը սովորեցնում է, որ մարդու իշխանությունն աշխարհի նկատմամբ կայանում է նրանում, որ մարդն անուններ է տալիս արարածներին (հմմտ. Ծնն. Բ. 19–20)։ Անվանելով դրանք՝ մարդն ընդունում է դրանց այնպիսին, ինչպիսին կան եւ դրանցից յուրաքանչյուրի հետ հաստատում է պատասխանատու հարաբերություններ։ Աստված, երբ հանձնարարեց Ադամին անուններ տալ այլ արարածներին, կյանքի էր կոչում Իր այն ծրագիրը, որը նշել էր մարդուն հասցեագրված «իշխեցե՛ք»։ Մարդն էր իշխելու բոլոր այլ արարածների վրա, հետեւաբար նա էլ պիտի դրանց անուններ տար, ինչպես Աստված էր իշխելու մարդուն, եւ Աստված Ինքն անուն տվեց նրան։ Սակայն անուն տալն ունի նաեւ մեկ այլ նշանակություն։ «Անունը վերաբերում է հենց իրին, բայց լոկ նրա համար, որպեսզի այն հարաբերվի ինձ հետ եւ այդպիսով մատչելի դառնա ինձ համար։ Հետեւաբար, անունը նշանակում է եւ պայմանավորում անվանյալի ներառումը հանրային կարգի մեջ, նրա ընդգրկումը ընկերային հարաբերությունների կառուցվածքում։ Նա, որ անվան փոխարեն լոկ համար է կրում, դուրս է մղվում մյուսների հետ կեցության կառուցվածքից, մինչդեռ անունով վերականգնվում է այդ հարաբերությունը»[9]։

Աստծու կողմից մարդու արարման հրաշալի տեսիլն անբաժան է առաջին մեղքի հուզիչ տեսարանից։ Պողոս առաքյալն ի մի է բերում մարդու անկման վերաբերյալ Ծննդոց գրքի պատմությունը. «զի որպէս ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին, եւ ի մեղաց անտի մահ» (Հռոմ. Ե. 12)։ Արդյունքում մարմինը մահկանացու է դառնում՝ համաձայն Ադամին նախապես տրված աստվածային պատվիրանի, որեւ վերածվում է անեծ-

---

[8] *Տե՛ս Յճխ. Ճառք, Վենետիկ, 1954, էջ 13։*

[9] *Տե՛ս* И. Рацингер, Введение в христианство, Брюссель, 1988, *էջ 90–91։*

քի. «...զի հող էիր եւ ի հող դարձցիս» (Ծննդ. Գ. 19)։ Առաջին մարդու մեղանչման պատճառով անեծքի տակ է ընկնում նաեւ ամբողջ երկիրը՝ իր բուսական ու կենդանական աշխարհներով (հմմտ. Ծննդ. Ե. 12)։ Մարդը, Աստծու արգելքին հակառակ տրվում է գայթակղությանը, նախընտրում հավատալ օձին, քան Արարչին, պարզում է ձեռքերը կենաց ծառին՝ ընկնելով մահվան իշխանության տակ։ Այս արարքով մարդը ձգտում է հաղթահարել իր սահմանափակվածությունը՝ մարտահրավեր նետելով Աստծուն՝ իր միակ Տիրոջն ու կյանքի Աղբյուրին։ Դա անհնազանդության մեղք է (հմմտ. Հռոմ. Ե. 19), որ առանձնացնում է մարդուն Աստծուց։

Այսպես, Ադամն ու Եւան մեղանչելով՝ աղճատում են իրենց աստվածային անթերի պատկերը, այսինքն՝ այդ աստվածապատկեր բարի բնության մեջ իրենց ազատ կամքով ու ընտրությամբ ընդունում են մեղքի թույնը, որն ախտահարում է մարդկային ողջ բնությունը՝ վնասելով ու հիվանդացնելով մարդ արարածի թե՛ հոգին եւ թե՛ մարմինը։ Այդժամ երանական վիճակում գտնվող մարդու կյանքը լցվում է բազմապիսի ցավերով ու տառապանքներով[10]։

Խախտելով Աստծո պատվիրանը, մարդը խզում է կապն իր Արարչի հետ, զրկվում լուսեղեն աննյութական զգեստից, ինչպես ասում է եկեղեցական ավանդությունը[11]։ «Եւ բացան աչք երկոցունց, եւ գիտացին զի մերկ էին եւ կարեցին տերեւս թզենւոյ, եւ արարին իւրեանց սփածանելիս» (Ծննդ. Գ. 7)։ Նախածնողները կորցնում են սրբությունն ու արդարակեցությունը, որ հատուկ է մարդուն ու նախատեսված է ոչ միայն իրենց, այլեւ ողջ մարդկության համար։ Իհարկե Ամենազոր Արարիչը կարող էր ստեղծել մի էակ, որ ծրագրված լիներ ամբողջովին՝ գործելու միմիայն բարին եւ մնալու առաքինության մեջ, սակայն Աստծու նպատակը այդ չէր։ Տիրոջ համար արժեքավորը, ոչ թե պարտադրված, այլ ազատ կամքով ընտրված բարին է։ «Ազատությունն է մարդու մեջ Աստծու պատկերը։

---

[10] *Մարմնական հիվանդության կամ արատի պատճառը հաճախ մեղքն է, որը պարզ երեւում է Ավետարանի որոշ հատվածներից։ Օրինակ՝ անդամալույծի բժշկությունը Տերը կատարեց մեղքերի թողության շնորհումով (հմմտ. Մատթ. Թ. 17), իսկ Պրոբատիկեի ավազանի անդամալույծին բժշկելուց հետո նրան ասաց. «Ահա առողջացար, այլեւս մի՛ մեղանչիր, որպեսզի ավելի չար բան քեզ չպատահի» (Հովհ. Ե. 14)։ Այսպես էին հավատում նաեւ հրեաները, եւ այդ էր պատճառը, որ ի ծնե կույրի մասին աշակերտները Տիրոջը հարցրին. «Մեղքն ո՞ւմն է, որ սա կույր է ծնվել՝ իրե՞նը, թե՞ իր հորն ու մորը» (Հովհ. Թ. 2, տես նաեւ Սիրաք ԼԸ. 15)։*

[11] *Տե՛ս* Ա Ռ Ա Ք Ե Լ Ս Ց Ի Ո Ն Ե Ց Ի՝ *Ադամգիրք, Երեւան, 1989, էջ 27։*

Քրիստոնեությունը չի սահմանափակում ազատությունն, այլ ազատում է մարդուն անկյալ աշխարհի դետերմինիզմից»[12]։ Սույն տողերի հեղինակը հետեւյալ կերպ է շարունակում իր միտքը. «Մարդու մեղսագործությունը կայանում էր նրանում, որ մարդն ընկավ տիեզերական դետերմինիզմի իշխանության տակ, մինչդեռ սկզբում, երբ նա աստվածային կյանքի մասնակից էր, երբ պահպանում էր իր մեջ Աստծո պատկերն ու նմանությունը, նա հիրավի ազատ էր»[13]։ Անշուշտ դեռ մարդուն արարելիս Աստված գիտեր, թե ինչ իրադարձությունների միջով են անցնելու մարդն ու ողջ մարդկությունը, գիտեր չարի ու բարու այն ներքին պայքարի մասին, որ հազարամյակների ընթացքում պիտի ծավալվեր մարդ արարածի ներաշխարհում։ Ու նաեւ գիտեր, որ Ինքն էլ պիտի այդ ողջ ընթացքում դաստիարակի եւ հանուն ճշմարտության ուղղորդի այդ էակին։ Հենց դա անում է Տերն աստվածաշնչյան ողջ իրադարձությունների ընթացքին։ Չէ՞ որ անհեթեթ կլիներ ենթադրել, թե Աստված չպատկերացնելով վերջնական արդյունքը արարում էր, չիմանալով ում է ստեղծում, եւ ինչ կլինի իր ստեղծածի հետ։ «Բարի է բնութեամբ Աստուած եւ նախագէտ. շարժեցաւ բարին առնել զԱդամ եւ զԵւայ։ Նախագիտութիւնն էր, որ ի նմա, գիտաց զոր ինչ լինելոց էր»[14]։ Բայց վերստին շեշտենք, որ մարդու հիմնական տարբերությունը մյուս արարածներից ազատ ընտրության հնարավորությունն է, որով նախաստեղծները տրվելով փորձիչ սատանային՝ անձնական մեղք գործեցին, բայց այդ մեղքը դիպավ մարդկային բնությանը, որ փոխանցվեց ու կտակվեց մեզ սերնդեսերունդ։ Ողջ մարդկությանը մեղքը փոխանցվեց ցեղի շարունակման միջոցով, այսինքն՝ սկզբնաստեղծ սրբությունից զրկված մարդկային բնության փոխանցման միջոցով, քանզի ամենքս էլ ադամորդիներ ենք։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, մարդկային արժանապատվությունն ու ընկերային պատասխանատվությունը ոչ միայն կրոնական ուսմունքների, այլեւ ժամանակակից հասարակության կարեւորագույն հիմնասյուներն են։ Մարդը

---

[12] *Տե՛ս* И. Мейндорф протоиереи, Православие и современный мир, *էջ 49։*

[13] *Տե՛ս նույն տեղում, էջ 66։*

[14] *Տե՛ս* Լ. Խաչիկյան, *Եղիշեի «Արարածոց մեկնությունը», Երեւան, 1992, էջ 241 (հավելված)։*

կոչված է պահպանելու իր անձի արժանապատվությունը, զարգացնելու հանրային կապերը, կառուցելու արդար հասարակություն: Այս գաղափարները կարող են ծառայել, որպես ուղեցույց ներկա դարում բարոյական եւ հանրային խնդիրների լուծման ճանապարհին:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մարդու արժանապատվություն, Աստծու պատկեր, Հանրային պատասխանատվություն, Ընտրության ազատություն, Սոցիալական էակ, Անձեռնմխելիություն, Սրբություն, Մեղք, Աստվածային ծրագիր, Հոգեւոր մահ, Շփում, Սեր, Արարչագործություն, Արդար հասարակություն, Աղքատ եւ տառապյալ, Ողորմություն, Ներում, Աստվածաշնչյան մարդաբանական ուսմունք, Հոգեւոր կապ, Նախախնամություն

РЕЗЮМЕ

В статье анализируются первые главы книги Бытия с акцентом на идеи человеческого достоинства и общественной ответственности. Подчеркивается, что человек создан по образу и подобию Бога и наделён свободной волей, разумом и способностью к любви. Христианское богословие рассматривает человека как общественное существо, призванное к диалогу, к жизни в гармонии с другими и к ответственной заботе о мире. Особое внимание уделяется последствиям первородного греха, который исказил божественный образ в человеке, но не уничтожил его. Церковь продолжает подчеркивать неприкосновенность человеческой личности и её высшее призвание к жизни с Богом. Также рассматриваются аспекты святости жизни, запрет на убийство и важность милосердия и покаяния. Автор делает вывод, что достоинство человека и его общественная роль остаются ключевыми ориентирами как в религиозной, так и в современной общественной этике.

SUMMARY

This article analyzes the first chapters of the Book of Genesis, highlighting the principles of human dignity and social responsibility. It emphasizes that humans are created in the image and likeness of God, endowed with free will, reason, and the capacity for love. Christian theology views the human being as a social entity, called to live in community, engage in dialogue, and take responsible stewardship of the world. Particular attention is given to the consequences of original sin, which distorted, but did not destroy the divine image in humanity. The Church consistently upholds the inviolability of human dignity and the high calling to communion with God. The text also addresses the sanctity of life, the commandment "Thou shalt not kill," and the importance of mercy and repentance. The author concludes that human dignity and public engagement remain foundational values in both religious doctrine and contemporary social ethics.